



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 7 ԱՌԻԴԻՏ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ

Քննաթերթ-պատասխաններ

Խնդիր 1	20 միավոր
Խնդիր 2	20 միավոր
Խնդիր 3	30 միավոր
Խնդիր 4	20 միավոր
Խնդիր 5	10 միավոր
Ընդամենը	100 միավոր

Խնդիր 1

ա) Պրոֆեսիոնալ հաշվապահը պետք է կիրառի մասնագիտական կամ բիզնես դատողություն՝ թույլ չտալով, որ այն խեղաթյուրվի կողմնակալության, շահերի բախման կամ անհատների, կազմակերպությունների, տեխնոլոգիայի և այլ գործոնների անհարկի ազդեցության կամ կախվածության պատճառով:

Պրոֆեսիոնալ հաշվապահը պետք է յուրաքանչյուր դեպքում գնահատի՝ արդյոք առկա են օբյեկտիվությանը սպառնացող վտանգներ և անհրաժեշտության դեպքում կիրառի համապատասխան նախազգուշական միջոցներ:

Օբյեկտիվությանը սպառնացող հիմնական վտանգներն են.

Անձնական շահի վտանգ – երբ հաշվապահը կամ աուդիտորը ունի ֆինանսական կամ այլ շահ, որը կարող է ազդել իր դատողությունների կամ պահվածքի վրա (օրինակ՝ նշանակալի վճար մեկ հաճախորդից, թանկարժեք նվերների կամ հյուրընկալության ընդունում, և այլն)

Ինքնաստուգման վտանգ – երբ հաշվապահը կամ աուդիտորը գնահատում է իր իսկ կողմից իրականացված աշխատանքը (օրինակ՝ հաշվապահական ծառայությունների մատուցում աուդիտի հաճախորդին)

Ինքնապաշտպանության վտանգ – երբ հաշվապահը պաշտպանում է հաճախորդի դիրքորոշումը երրորդ կողմի առաջ (օրինակ՝ դատարանում հաճախորդին ներկայացնելը այնպիսի հարցում, որը էական ազդեցություն ունի ֆինանսական հաշվետվությունների վրա)

Մտերմության վտանգ – երբ երկարատև կամ սերտ հարաբերությունները հանգեցնում են քննադատական մտածողության թուլացման (օրինակ աուդիտորական խմբի անդամը սերտ/ընտանեկան հարաբերություն ունի հաճախորդի ղեկավար անձնակազմի անդամի հետ)

Ահաբեկման վտանգ – երբ պրոֆեսիոնալ հաշվապահը ենթարկվում է ճնշման կամ սպառնալիքների (օրինակ՝ հաճախորդի կամ աշխատանքի կորստի վախ)

Յուրաքանչյուր լավ մեկնաբանված վրանգի համար տրվում է մինչև 1.5–2 միավոր՝ առավելագույնը 8 միավոր:

բ) Իրավիճակ 1 – «Արփի աուդիտ» ՍՊԸ

Օբյեկտիվության սկզբունքին սպառնացող վտանգներ	Նախագուշակյալ միջոցներ
<p>Մտերմության վտանգ- "Արփի աուդիտ" ՍՊԸ կողմից 12 տարի շարունակ "Լևոն Սթրոյ" ՓԲԸ-ի ուղիտ իրականացնելու արդյունքում աուդիտորական առաջադրանքի գործընկերը կարող է դառնալ չափազանց վստահող և չկիրառի բավարար պրոֆեսիոնալ սկեպտիցիզմ աուդիտի ժամանակ</p>	<p>Առաջադրանքի գործընկերոջ և առաջադրանքի հիմնական թիմի ռոտացիա կամ երկրորդ անկախ վերանայող գործընկերոջ ներգրավում</p>
<p>Անձնական շահի վտանգ – աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների համակցված վճարը կազմում է "Արփի աուդիտ" ՍՊԸ ընդհանուր եկամուտների նշանակալի մասը՝ շուրջ 17%, ինչն առաջացնում է կախվածություն և հաճախորդին կորցնելու վախ</p>	<p>Վճարի էականության վերազնահատում և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ խորհրդատվական ծառայությունից հրաժարում: Ճիշտ է եկամտի մի մասը միանվագ բնույթ է կրում, սակայն աուդիտորական կազմակերպությունը պետք է գնահատի, արդյոք նոր նախագծի իրականացման արդյունքում հնարավոր է բիզնեսի ընդլայնում և որպես արդյունք աուդիտի վարձավճարի ավելացում</p>
<p>Ինքնաստուգման վտանգ- ֆինանսական մոդելի պատրաստումը ներկայացնում է ոչ աուդիտորական առաջադրանքի իրականացում, որը հետագայում կարող է ազդել ֆինանսական հաշվետվությունների վրա: Մոդելի պատրաստումը ենթադրում է մասնագիտական դատողության կիրառում, գնահատումներ և աուդիտը թիմը կարող է կորցնել անկախությունը և չգտնել կամ չցանկանալ գտնել թերություններ իրենց կողմից պատրաստված մոդելում:</p>	<p>Խորհրդատվական ծառայության իրականացումը կարող է ընդունվել էթե, ծառայությունը իրականացվի այլ թիմի կողմից, որը ներգրավված չէ աուդիտում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ներգրավել համապախատասխան անկախ վերանայող, ով ներառված չէ աուդիտի կամ խորհրդատվական թիմում</p>
<p>Ինքնապաշտպանության վտանգ – ներդրողին ներկայացվող համաձայնագրում աուդիտորը կարող է հանդես գալ որպես հաճախորդի դիրքորոշման պաշտպան</p>	<p>Խորհրդատվական առաջադրանքի հստակ սահմանում և փաստաթղթավորում, մասնավորապես հստակ տարանջատում աուդիտի շրջանակից: Ծառայության իրականացում ոչ աուդիտի թիմի կողմից, անկախ գործընկերոջ ստուգում: Աուդիտորը չպետք է ուղղակիորեն ներկայացնի հաճախորդին ներդրողի մոտ:</p>

Իրավիճակ 2 – «Սալմաստ Տեք» ՍՊԸ

Օբյեկտիվության սկզբունքին սպառնացող վտանգներ	Նախագգուշական միջոցներ
Մտերմության վտանգ-Ասթինե Մանուկյանը կարող է կախվածություն ունենալ և անկախ չգործել ղեկավարության հետ նախկին համագործակցության արդյունքում	Ներքին աուդիտի ղեկավարի կողմից անկախ վերանայում
Ինքնաստուգման վտանգ- Ասթինե Մանուկյանը պետք է պլանավորի և աուդիտ իրականացնի իր կողմից նախագծված վերահսկողական համակարգերի նկատմամբ	Ասթինե Մանուկյանը չպետք է ներգրավվի այն գործընթացների աուդիտում, որոնք ինքն է նախագծել

Յուրաքանչյուր իրավիճակի համապարփակ վերլուծության համար՝ մինչև 6 միավոր:

ԽՆԴԻՐ 2

ա) Նախորդ տարվա էականության ավտոմատ կիրառումը ընթացիկ տարվա աուդիտի համար **անընդունելի է**: Էականությունը պետք է սահմանվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար առանձին՝ հաշվի առնելով ընթացիկ տարվա ֆինանսական վիճակը, արդյունքները, և հայտնի բոլոր գործոնների ազդեցությունը:

Այն դեպքում, երբ ընթացիկ տարվա ֆինանսական վիճակը և արդյունքը նախորդ տարվա համեմատ զգալիորեն չեն փոխվել, ապա հնարավոր է, որ ընթացիկ տարվա հաշվարկված էականությունը շատ մոտ լինի նախորդ տարվա ցուցանիշին, սակայն դա չի նշանակում, որ աուդիտորը կարող է այն չորոշել:

Տվյալ դեպքում Ընկերության ակտիվները և սեփական կապիտալը էականորեն նվազել են, իսկ սեփական կապիտալը դարձել է բացասական, ինչը վկայում է ֆինանսական վիճակի արմատական փոփոխության մասին: Հետևաբար, ընթացիկ տարվա էականությունը, ամենայն հավանականությամբ, կլինի նախորդ տարվանից զգալիորեն ցածր: Սակայն, հնարավոր է արտառոց իրավիճակ, երբ ակտիվների նվազումը և վնասի առաջացումը կապված է որևէ միանվագ դեպքի հետ, ինչը բացառելով երկու տարիների էականությունները շատ չտարբերվեն:

Միավորները բաշխվում են հետևյալ տրամաբանությամբ.

ա) Ինքնաշխատ կերպով նախորդ տարվա էականության կիրառման անընդունելիություն՝ 1 միավոր

բ) Էականությունը որոշելիս բոլոր ընթացիկ գործոնների հաշվի առնելու հանգամանքի մատնանշում՝ 1 միավոր

գ) Ֆինանսական վիճակի էական փոփոխության մատնանշում՝ 1 միավոր

դ) Ընթացիկ տարվա հնարավոր ցածր էականության ակնարկ՝ 1 միավոր

Առավելագույնը 3 միավոր

բ) Աուդիտորական ռիսկը այն ռիսկն է, որ աուդիտորը անհամապատասխան աուդիտորական կարծիք կհայտնի, երբ ֆինանսական հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված են

Աուդիտորական ռիսկը էական խեղաթյուրման ռիսկերի և չհայտնաբերման ռիսկի գործառույթն է: Այն բաղկացած է երեք բաղադրիչից.

- Բնորոշ ռիսկ – գործառնության դասի, հաշվապահական մնացորդի կամ բացահայտման վերաբերյալ հավաստումների զգայունությունը խեղաթյուրման նկատմամբ, որը կարող է էական լինել առանձին կամ այլ խեղաթյուրումների հետ միասին, առանց վերահսկողական համակարգերի հաշվի առնելու

- Վերահսկողության ռիսկ – ռիսկ, որ ներքին վերահսկողական համակարգը չի կանխի կամ չի հայտնաբերի ու շտկի ժամանակին էական խեղաթյուրումը
- Չհայտնաբերման ռիսկ – ռիսկ, որ աուդիտորի կողմից իրականացվող ընթացակարգերը չեն հայտնաբերի առկա խեղաթյուրումը, որը կարող է էական բնույթ ունենալ առանձին կամ այլ խեղաթյուրումների հետ միասին

Չհայտնաբերման ռիսկը իր հերթին բաղկացած է

-Ընտրանքային ռիսկ -ընտրանքի հիման վրա տրված աուդիտորական եզրակացությունը կարող է տարբերվել այն եզրակացությունից երբ նույն ընթացակարգը կիրառվեր ամբողջ բազմության վրա (ընտրանքը ներյայացուցչական չէր)

-ոչ ընտրանքային ռիսկ-այն ռիսկն է , որ աուդիտորը կհանգի սխալ եզրահանգման՝ ընտրանքին չվերաբերող պատճառով:

Բնորոշ և վերահսկողական ռիսկերը գնահատվում են աուդիտորի կողմից, որից հետո չհայտնաբերման ռիսկը սահմանվում է այն մակարդակին, որի դեպքում ընդհանուր աուդիտորական ռիսկը ընդունելի կլինի աուդիտորի համար:

Միավորները բաշխվում են հետևյալ տրամաբանությամբ.

ա) Աուդիտորական ռիսկի սահմանում՝ 1 միավոր

բ) Աուդիտորական ռիսկի բաղադրիչների սահմանում՝ 1 միավոր

գ) Ընտրանքային և ոչ ընտրանքային ռիսկի սահմանում՝ 1 միավոր

գ)

Անընդհատություն

Ընդամենը ակտիվները նվազել են շուրջ 44 մլրդ դրամով: Չնայած շահույթի և վնասի և այլ համապարփակ արդյունքի հաշվետվության բացակայությանը, հաշվեկշռից կարելի է ենթադրել, որ տարվա վնասը կազմել է 34 մլրդ դրամ:

Ընթացիկ ակտիվներում էական նվազել են պաշարները և դեբիտորական պարտքերը, ինչը կարող է վկայել վաճառքների ծավալի էական անկման մասին: Միևնույն ժամանակ կրեդիտորական պարտքերի հարարաբերական կայուն ցուցանիշը կարող է վկայել պարտքերը մարելու խնդիրների մասին:

Դրամական միջոցների հաշվետվության բացակայության պարագայում կարելի է ենթադրել, որ հիմնական նվազման մի մասը պայմանավորված է 3մլրդ դրամ բանկային վարկերի մարման հետ: Նաև, կարելի է ենթադրել, որ ընկերությունը կարող է ունենալ

իրացվելիության խնդիրներ սպասվող վարկային մարումների և կրեդիտորական պարտքերի մարումների պարագայում, այն դեպքում երբ բիզնեսը բավարար հասույթ չի գեներացնում:

Այսպիսով առկա են մի շարք հայտանիշներ, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ առկա է ընկերության անընդհատ գործելու կարողության էական ռիսկ:

Պաշարներ

Պաշարների զգալի նվազումը՝ 23 մլրդ դրամ, կարող է պայմանավորված լինել

- գործունեության կրճատմամբ,
- կամ պաշարների դուրսգրմամբ / սխալ հաշվառմամբ:

Աուդիտորական աշխատանքները պետք է կենտրոնանա նվազման պատճառները բացահայտելու ուղղությամբ: Անհրաժեշտ է կատարել ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի թեստավորում:

Երաշխիքային պահուստ

Տարեվերջի դրությամբ 6 մլրդ դրամի երաշխիքային պահուստի հաշվառումը պահանջում է նշանակալի դատողություններ: Աուդիտորը պետք է ուսումնասիրի պահուստի ձևավորման հիմքերը և վերահաշվարկի այն: Հարց է առաջացնում նաև այն փաստը, ինչու է ընկերությունը պահուստ ձևավորել միայն 31 դեկտեմբեր 2025թ. դրությամբ: Հնարավոր է, որ նախկինում ՀՀՄՍ 37ի պահանջները չեն կիրառվել, կամ Ընկերությունը փոխել է վաճառքների պայմանագրերում էական դրույթներ:

Առկա է պահուստի **թերա- կամ գերազնահատման ռիսկ** (ՀՀՄՍ 37):

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերի բարձր մակարդակը և դրամական միջոցների նվազումը կարող են վկայել հավաքագրման խնդիրների մասին և անհավաքագրելիության պահուստի թերազնահատման ռիսկի մասին:

Այլ հոդվածներ

Էականության նվազման արդյունքում մի շարք հոդվածներ կարող են դառնալ էական և պահանջել մանրամասն թեստավորում:

Միավորները բաշխվում են հետևյալ տրամաբանությամբ.

- Անընդհատության բնագավառի ակնարկ՝ 2 միավոր
- Դեբիտորական պարտքերի և պաշարների նվազում՝ 1 միավոր
- Գործունեության ծավալի կրճատում՝ 1 միավոր

- Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վերանայման անհրաժեշտություն՝ 1 միավոր

Դրամական միջոցների մնացորդների կրճատում՝ 1 միավոր

- Պաշարների բնագավառի ակնարկ՝ 2 միավոր

- Երաշխիքային պահուստի բնագավառի ակնարկ՝ 2 միավոր

- ՀՀՄՍ 37ի հնարավոր սխալ կիրառման ակնարկ՝ 1 միավոր

Այլ էական հոդվածներ՝ 2 միավոր 0

-Դեբիտորական պարտքեր՝ 1 միավոր

Առավելագույնը 14 միավոր

ԽՆԴԻՐ 3

(ա) Վերահսկողության նպատակներ

Վաճառքների համակարգ

- Ապրանքներն ու ծառայությունները մատակարարվում են միայն լավ վարկային պատմություն(բարձր վարկանիշ) ունեցող հաճախորդներին
- Գործում են մեխանիզմներ, որոնք խրախուսում են, որ հաճախորդները վճարումները ժամանակին կատարեն
- Պատվերները գրանցվում են ճշգրիտ
- Պատվերները պատշաճ կերպով իրականացվում են
- Բոլոր առաքումները գրանցվում են
- Վաճառված բոլոր ապրանքների և մատակարարված ծառայությունների գծով դուրս են գրվում ճշգրիտ հաշիվ-ապրանքագրեր
- Դուրս գրված բոլոր հաշիվ-ապրանքագրերը վերաբերում են կազմակերպության կողմից մատակարարված ապրանքներին կամ ծառայություններին
- Վերադարձերի ընդունում միայն հիմնավորված դեպքերում
- Բոլոր վաճառքները գրանցվում են հաշվապահական համակարգում
- Վաճառքների բոլոր գործառնությունները կատարվում են ճիշտ հաշվապահական հաշիվներով

Ակնկալվող պարտքային կորստի ժամանակին և ճշգրիտ հայտնաբերում և հաշվարկում

Գնումների համակարգ

- Բոլոր պատվերները պատշաճ կերպով վավերացված են և վերաբերում են փաստացի ստացված ապրանքներին կամ ծառայություններին
- Պատվերները կատարվում են միայն հաստատված մատակարարներին մրցակցային գներով
- Ապրանքներն ու ծառայությունները ընդունվում են միայն այն դեպքում, երբ դրանք պատվիրված և վավերացված են
- Ստացված բոլոր ապրանքներն ու ծառայությունները ճշգրիտ գրանցվում են
- Բոլոր ստացված ապրանքների և ծառայությունների դիմաց պարտավորությունները գրանցվում են
- Ստացված բոլոր կրեդիտ նոտաները գրանցվում են ճշգրիտ

Ծանոթագրություն. յուրաքանչյուր համակարգի համար պահանջվում է նշել միայն երեք նպատակ: Յուրաքանչյուր տեղին նպատակի համար տրվում է 1 միավոր:

(բ) Աուդիտորական աշխատանքներ

(i) Գլխավոր գրքում գրանցված գնումների գործառնությունների ճշգրտության ստուգում

Գնումների գործառնությունների ճշգրտությունը հավաստիացնելու նպատակով կիրականացվեն հետևյալ ընթացակարգերը.

- Կստուգվի, որ հաշվապահը ժամանակին է իրականացնում գնումների գործառնությունների ամսական մուտքագրումները գլխավոր գրքում
- Գնումների գործառնությունների նկատմամբ կիրականացվեն հետևյալ կոնկրետ թեստերը.
 1. Գնումների հաշիվ-ապրանքագրերը կհամադրվեն գլխավոր գրքում կատարված գրառումներին՝ ստուգելով անալիտիկ հաշիվները
 2. Հաշիվ-ապրանքագրի ընդհանուր գումարը կհամադրվի գլխավոր գրքում գրանցված գումարի հետ
 3. Ծախսի դասը և գումարը կստուգվեն՝ հաստատելու համար, որ դրանք ճիշտ են արտացոլված
 4. Գնումների անալիտիկ ցանկի հանրագումարը կհամադրվի գլխավոր գրքում գրանցված հանրագումարի հետ
 5. Գլխավոր գրքում ամսական ձևակերպումների հանրագումարը հետադարձ կերպով կհամադրվի հաշիվ-ապրանքագրերի հանրագումարի հետ
 6. Ծախսի գումարը կհամաձայնեցվի գլխավոր գրքում գրանցված գումարի հետ
 7. Կատարված վճարումների, ստացված զեղչերի և ճշգրտումների նկատմամբ իրականացվող ընթացակարգերը կկրկնեն նույն տրամաբանությունը, ինչ հաշիվ-ապրանքագրերի և կրեդիտ նոտաների դեպքում
 8. Հատուկ ուշադրություն կդարձվի «գնումների» ծախսային հոդվածի ճիշտ դասակարգմանը (օր.՝ գրենական պիտույքներ, կոմունալ ծախսեր)
 9. Բյուջեից էական շեղումները կքննարկվեն՝ բացառելու համար անալիտիկ կամ սինթետիկ սխալ հաշիվների վերագրելուն վերաբերելի սխալները

Այս թեստերը ապահովում են գործառնությունների ստուգում ինչպես ամբողջականության, այնպես էլ ճշգրտության հավաստիացման համար: Հայտնաբերված ցանկացած սխալ մանրամասն կուսումնասիրվի՝ վերջինիս տեսակի, պատճառի, էականության և կրկնվող բնույթի տեսանկյունից:

Ծանոթագրություն. Յուրաքանչյուր տեղին ընթացակարգի համար տրվում է 1 միավոր:
Առավելագույնը 5 Միավոր

(ii) Գլխավոր գրքում գրանցված հաշվապահական ձևակերպումների ստուգում

Հաշվապահական ձևակերպումների հավաստիությունն ու ճշգրտությունը ստուգելու նպատակով կիրականացվեն հետևյալ թեստերը.

- Կստուգվեն տարվա սկզբնական մնացորդները՝ նախորդ տարվա վերջնական մնացորդների հետ համադրելով՝ հաստատելով գումարների և հաշիվների ճշգրտությունը
- Կստուգվի, որ բոլոր սկզբնական հաշիվները նախապես զրոյացված են
- Այլ դրամարկղային գործառնությունները կհամադրվեն գլխավոր գրքում գրանցված տվյալների հետ՝ ստուգելով գումարների և ծախսերի կատեգորիաների ճշգրտությունը
- Խոշոր, արտասովոր կամ կասկածելի գործառնությունները կստուգվեն ամբողջությամբ և կհավաստվեն համապատասխան փաստաթղթերով կամ խորհրդի/ղեկավարության որոշումներով
- Բանկային հաշիվների տարեվերջյան մնացորդները կհամադրվեն բանկային քաղվածքների հետ

Կանխիկ դրամական միջոցներ

- Ստուգում, որ բոլոր վճարումները վավերացված են և գրանցված են ճիշտ հաշիվներում
- Ստուգում, որ վճարումները չեն գերազանցում ղեկավարության կողմից սահմանված սահմանաչափերը
- Կանխիկ դրամական միջոցների համադրում գույքագրման ակտի հետ

Աշխատավարձ

- Ամսական ամփոփ հանրագումարների համադրում գլխավոր գրքի հետ
- Աշխատավարձերի ողջամտության վերլուծություն՝ տնօրենների և ստորաբաժանումների կտրվածքով
- Եկամտային հարկի և այլ պահումների ճշգրտության ստուգում
- Տարեկան աշխատավարձի համադրում բյուջեի հետ

Ճշգրտումներ

- Ստուգում, որ բոլոր ճշգրտումները պատշաճ կերպով հաստատված են գործադիր տնօրենի կողմից և ունեն հիմնավոր փաստաթղթեր
- Ստուգում, որ ձևակերպումները գրանցված են հերթական համարակալմամբ՝ առանց բացթողումների
- Խոշոր և կրկնվող սխալների մանրամասն ուսումնասիրություն
- Միջանկյալ հաշիվների բոլոր մուտքերի և ելքերի ստուգում

Տարեվերջյան մնացորդներ

- Միջանկյալ հաշիվներում մնացած բոլոր հոդվածների մանրամասն ցուցակի ստացում և հիմնավորումների ստուգում
- Գլխավոր գրքի մնացորդների համադրում համապատասխան հաշիվների մնացորդների հետ
- Ոչ ընթացիկ ակտիվների բոլոր շարժերի ստուգում, ներառյալ՝ ձեռքբերումներ, օտարումներ, վերագնահատումներ, մաշվածություն, գլխավոր գրքում դրանց գրանցումների ամբողջականության և ճշգրտության համար
- Չմարված պարտավորությունների հաստատում և ողջամտության գնահատում
- Բանկային համադրումների ստուգում բոլոր հաշիվների համար
- Ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր վերլուծություն՝ նախորդ տարվա համեմատ էական փոփոխությունների հիմնավորումը ստուգելու նպատակով (ակտիվներ, պարտավորություններ, սեփական կապիտալ): Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ վերլուծությունը պետք է իրականացվի թե բացարձակ, թե հարաբերական ցուցանիշներով:

***Ծանոթագրություն.** Յուրաքանչյուր տեղին ընթացակարգի համար տրվում է 1 միավոր: Առավելագույնը 15 Միավոր*

(գ) Սկզբնական մնացորդներ

Համաձայն ԱՄՍ 510 «Սկզբնական աուդիտորական առաջադրանքներ. սկզբնական մնացորդներ», աուդիտորը պարտավոր է.

- Ծանոթանալ ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և դրա վերաբերյալ նախորդ աուդիտորական եզրակացության հետ սկզբնական մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու համար
- Ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ, որ սկզբնական մնացորդները չեն պարունակում այնպիսի խեղաթյուրումներ, որոնք էականորեն ազդում են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վրա

- Համոզվել, որ հաշվապահական քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են
- Եթե հայտնաբերվեն էական խեղաթյուրումներ, իրականացնել լրացուցիչ ընթացակարգեր և դրանց մասին հաղորդել համապատասխան մակարդակի ղեկավարությանը և կառավարման օղակներում գտնվող անձանց

Ծանոթագրություն. Յուրաքանչյուր տեղին պարտավորության համար տրվում է 1 միավոր:

ԽՆԴԻՐ 4

Աուդիտի ընթացքում, երբ աուդիտորը օգտագործում է փորձագետների աշխատանքը, անհրաժեշտ է գնահատել այդ աշխատանքի հուսալիությունը, որպեսզի որոշվի՝ արդյոք այն կարող է ծառայել որպես համապատասխան աուդիտորական ապացույց: Այս հարցերը կարգավորվում են հիմնականում ԱՄՍ 500 «Աուդիտորական ապացույցներ» և ԱՄՍ 620 «Աուդիտորի փորձագետի աշխատանքի օգտագործումը» ստանդարտներով:

ա) Իրավաբանական կարծիք

Դատական հայցի հնարավոր ելքի վերաբերյալ ստացված իրավաբանական կարծիքի հուսալիությունը գնահատելիս աուդիտորը պետք է դիտարկի հետևյալ հարցերը.

1. Հայցի էականությունը

Եթե դատական հայցը էական է, ապա դրա ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է լինել նշանակալի, և պահանջվում է առավել խորացված աուդիտորական աշխատանք:

2. Իրավախորհրդատուի որակավորումը և փորձառությունը

Անհրաժեշտ է գնահատել իրավախորհրդատուի մասնագիտական որակավորումը, փորձառությունը և մասնագիտացումը տվյալ տեսակի դատական գործերի ոլորտում: Կարևոր է նաև իրավաբանական ընկերության հեղինակությունը:

3. Իրավախորհրդատուի անկախությունը

Անհրաժեշտ է դիտարկել իրավախորհրդատուի անկախությունը, քանի որ իրավախորհրդատուի և ընկերության կամ ղեկավարության միջև մտերմությունը կարող է նվազեցնել տրամադրված կարծիքի հուսալիությունը:

4. Տրամադրված տեղեկատվության ամբողջականությունը

Պետք է համոզվել, որ իրավախորհրդատուն իր կարծիքը ձևավորել է ընկերության կողմից տրամադրված բոլոր անհրաժեշտ փաստերի հիման վրա:

5. Կարծիքի ողջամտությունը

Իրավաբանական կարծիքը պետք է գնահատվի աուդիտորի փորձառության և նախորդ համանման գործերի ելքերի լույսի ներքո:

6. Անորոշության աստիճանը

Եթե դատական հայցի ելքի վերաբերյալ առկա է էական անորոշություն, ապա հնարավոր է պահանջվի լրացուցիչ բացահայտում ֆինանսական հաշվետվություններում:

7. Երկրորդ կարծիքի անհրաժեշտությունը

Էական և վիճահարույց դեպքերում աուդիտորը կարող է առաջարկել ստանալ երկրորդ անկախ իրավաբանական կարծիք: Եթե դա մերժվի կամ անորոշությունը մնա, դա կարող է հանգեցնել աուդիտորական կարծիքի ձևափոխման:

Ծանոթագրություն. Յուրաքանչյուր տեղին մտքի համար տրվում է 1 միավոր:

բ) Անկախ գնահատողի կողմից ներդրումային գույքի գնահատում

Ներդրումային գույքի գնահատման հուսալիությունը գնահատելիս աուդիտորը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ գործոններին.

1. Գնահատողի անկախությունը

Անկախ գնահատողը չպետք է ունենա որևէ ֆինանսական կամ այլ շահ ընկերության հետ, որը կարող է ազդել գնահատման արդյունքի վրա:

2. Գնահատողի որակավորումը և հեղինակությունը

Գնահատողը պետք է ունենա համապատասխան մասնագիտական որակավորում, լիցենզիա և փորձառություն տվյալ տեսակի գույքի գնահատման ոլորտում: Այն դեպքում, երբ գնահատողը նման փորձառություն չունի կարող է նվազել գնահատման հուսալիությունը: Անկախ գնահատողի կամ կազմակերպության բարձր հեղինակությունը ոլորտում ևս կարևոր գործոն է և կարող է բարձրացնել կատարված աշխատանքի նկատմամբ վստահության մակարդակը:

3. Կիրառված գնահատման մեթոդաբանությունը

Աուդիտորը պետք է ուսումնասիրի՝ արդյոք կիրառված գնահատման մեթոդը (օրինակ՝ շուկայական համեմատական մեթոդը) ողջամիտ և տեղին է տվյալ հանգամանքներում:

4. Գնահատման հաշվետվության բովանդակությունը

Գնահատման հաշվետվությունը պետք է լինի մանրամասն, հիմնավորված և ներառի հիմնական ենթադրությունները:

5. Համեմատություն շուկայական տվյալների հետ

Գնահատման արդյունքը կարող է համադրվել վերջին շուկայական գործարքների կամ համանման գույքի գնահատումների հետ:

6. Նախորդ գնահատումների հետ համեմատություն

Գնահատման մեջ առկա էական փոփոխությունները նախորդ տարիների համեմատ պետք է հիմնավորված լինեն:

7. Աուդիտորի մասնագիտական դատողությունը

Աուդիտորը պետք է գնահատի՝ արդյոք գնահատման արդյունքը ողջամիտ է ֆինանսական հաշվետվությունների համատեքստում:

Ծանոթագրություն. Յուրաքանչյուր տեղին մտքի համար տրվում է 1 միավոր:

գ) Ներքին գնահատողի կողմից իրականացված անավարտ շինարարության գնահատում

Անավարտ շինարարության գնահատման դեպքում, որը կատարվել է ընկերության աշխատակցի կողմից, աուդիտորը պետք է հաշվի առնի հետևյալը.

1. Ակտիվի էականությունը

Եթե անավարտ շինարարությունը էական է ֆինանսական հաշվետվությունների համար, ապա պահանջվում է առավել մանրամասն ստուգում:

2. Կիրառված հաշվապահական հիմքը

Պետք է համոզվել, որ գնահատումը իրականացվել է հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան (օրինակ՝ ՀՀՄՍ 2 կամ ՀՀՄՍ 16՝ կախված բնույթից):

3. Գնահատողի անկախության բացակայությունը

Քանի որ գնահատողը ընկերության աշխատակից է, առկա է կողմնակալության վտանգ, ինչը նվազեցնում է գնահատման նկատմամբ հուսալիությունը:

4. Գնահատման հիմքում ընկած տեղեկատվությունը

Անհրաժեշտ է ստուգել, որ գնահատումը հիմնված է փաստացի կատարված ծախսերի, շինարարության ավարտվածության աստիճանի և համապատասխան փաստաթղթերի վրա:

5. Ֆիզիկական ստուգման ապացույցներ

Աուդիտորը պետք է ձեռք բերի ապացույցներ, որ գնահատողը իրականում այցելել է շինարարության օբյեկտները և գնահատել առաջընթացը:

6. Ծախսերի հաշվառման ողջամտությունը

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերադիր ծախսերի բաշխման հիմքերին և ինքնարժեքի հաշվարկի ճշգրտությանը:

Ծանոթագրություն. Յուրաքանչյուր տեղին մտքի համար տրվում է 1 միավոր:

ԽՆԴԻՐ 5

1. դ

2. գ

3. ա, դ

4. ա, դ

5. դ